Մենք համոզված ենք, որ պետք է պահպանել կրոնի և խղճի ազատությունը

Պատասխանեք հետևյալ հարցերին:

- Ե՞րբ եք քննարկել կրոնը կամ հոգևոր համոզմունքներն այն մարդու հետ, որի համոզմունքները տարբերվում են ձերից:

- Նրանք ինչպե՞ս արձագանքեցին ձեր համոզմունքներին: Դուք ինչպե՞ս արձագանքեցիք նրանց համոզմունքներին:

Դիտարկենք հետևյալ սցենարը.

Լիամն իր դպրոցի ֆուտբոլային թիմի անդամ է: Նրա թիմի անդամներից մեկը՝ Զեյնը յուրաքանչյուր խաղից առաջ կատարում է անձնական կրոնական ծես: Զեյնն իր կրոնին պատկանող միակ մարդն է թիմում: Թիմի մյուս անդամները նկատել են, թե ինչ է անում Զեյնը և նախատում են նրան այդ բանի համար: Լիամը գիտի, որ Զեյնի կրոնը երբեմն բացասաբար է ընկալվում իրենց համայնքի մարդկանց կողմից:

Ուսումնասիրեք հետևյալ նյութերը՝ մտածելով, թե դրանք ինչպես կարող են կիրառվել Լիամի իրավիճակում և ձեր փոխհարաբերություններում այն մարդկանց հետ, որոնք այլ հավատք ունեն:

Ալմա 30.7–9

Հավատո Հանգանակ 1.11

Մարգարե Ջոզեֆ Սմիթն (1805–44) ուսուցանել է.

> Եթե ես ակնարկեցի, որ կկամենամ մահանալ ցանկացած «մորմոնի» համար, ես համարձակություն ունեմ հայտարարել երկնքի առջև, որ ես պատրաստ եմ իմ կյանքը տալ, պաշտպանելով ցանկացած երիցականի կամ մկրտականի կամ որևէ այլ դավանանքի պատկանող լավ մարդու, քանի որ նույն սկզբունքը, որը ոտնակոխ կարող է անել Վերջին Օրերի Սրբերի իրավունքները, ոտնակոխ կանի նաև . . . որևէ այլ դավանանքի իրավունքները, որը կարող է ժողովրդականություն չվայելել և խիստ թույլ լինել՝ իրեն պաշտպանելու համար:
>
> Ազատության սերն է, որ ոգեշնչում է հոգիս՝ քաղաքացիական և կրոնական ազատությունը ողջ մարդկային ցեղի համար: (*Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 345)

- Ինչո՞վ կարող եք կիսվել Լիամի հետ, որը կօգնի նրան արձագանքել այն իրավիճակին, որում գտնվում է:

- Ի՞նչ սովորեցիք այն մասին, թե Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսն ինչպե՞ս կցանկանային, որ դուք վերաբերվեիք նրանց, ովքեր այլ հավատք ունեն:

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_463-2